ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-244

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարան
meryavetisyan1984@gmail.com

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍՊԱՍՔԻ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Հիմնաբառեր. Երևան քաղաքի պատմության թանգարան, թանգարանային հավաքածու, սպասք, գործառույթ, թանգարանային առարկա, մշակութային հաղորդակցություն, ցուցադրություն:

Հոդվածը Երևան քաղաքի պատմության թանգարանի (ԵՔՊԹ) սպասքի ցուցադրական համալիրների, դրանց կառուցման մեթոդների ուսումնասիրության փորձ է, որի նպատակն է պարզել, թե թանգարանային միջավայրում ի՞նչ սկզբունքով և շեշտադրումով է սպասքը իրականացնում մշակութային հաղորդակցության իր գործառույթը, թե որքանո՞վ է հաջողվել սպասքի առանձին ցուցադրական համալիրների միջոցով ընդգծել քաղաքային միջավայրի առանձնահատկությունները: Թանգարաններում կատարվող ուսումնասիրությունների արդիականությունը հատկապես ընդգծվում է, երբ դիրսկուրսի առանցքում թանգարանային հաղորդակցությունն է: Ժամանակակից թանգարանների գործունեությունը միտված է հասարակության ինտեգրմանը թանգարան և հակառակը, ինչն իրականացվում է թանգարաններում մշակութային հաղորդակցության միջոցով: Մշակութային հաղորդակցության իրականացման գործընթացում դոմինանտ համարելով միջավայրի գործոնը՝ ստորև ներկայացնում ենք ԵՔՊԹ-ի պատմությունը՝ ընդգծելով թանգարանի կարևորությունը մայրաքաղաքի կյանքում՝ որպես մշակութային միջավայր:

1931 թ. հունվարի մեկի Երևանի քաղխորհրդի նախագահության որոշումով հիմնադրվում է Երևանի կոմունալ թանգարանը: Գիտամշակութային հարցերը քննարկելու համար թանգարանին կից ստեղծվում է նաև գիտական խորհուրդ: Մեկնարկում են Երևանին վերաբերող նյութերի հավաքման աշխատանքները: Ավելացող թանգարանային նյութերի պատշաճ պահպանությունն ու ցուցադրումը ենթադրում էին նոր շենքային պայմաններ և 1936 թ. թանգարանը տեղափոխվում է 17-րդ դարի հուշարձան, իրանական Կապույտ մզկիթ: Նույն թվականին էլ թանգարանը վերանվանվում է «Երևան քաղաքի պատմության թանգարան»: Եվ միայն 2002 թ. ՀՀ կառավարության որոշմամբ Երևանի քաղաքապետարանի համար կառուցվող շենքում առանձին մաս է տրամադրվում թանգարանին՝ վերջինիս

* Ստացվել է 20.02.2023 թ., ուղարկվել է գրախոսման 25.02.2023 թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.:

հետ կազմելով մեկ ընդհանուր ճարտարապետական համալիր և հենց այստեղ էլ 2007 թ. ապրիլի երեքին բացվում է թանգարանի հիմնական ցուցադրությունը (Սարգսյան 2021, 745)։

Որպես թանգարանային գործունեության մեկնակետ և թանգարանային ուսումնասիրությունների սահմաններն ընդգծող գործոն, առանցքային է թանգարանի որդեգրած առաքելությունը, չնայած որ այն ենթակա է փոփոխությունների՝ կապված թանգարանի գործունեության խնդիրների առաջնահերթությունից (Պիկիչյան և այլք 2006, 19)։ Թանգարանը ստեղծման պահից մինչ այսօր նպատակ ունի հարուստ և բազմաբնույթ հավաքածուների միջոցով հայ և օտար այցելուներին ծանոթացնել Երևան քաղաքի պատմությանը և երևանցիների կենցաղին՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր, մասնակիցը դառնալ հասարակության հոգևոր զարգացմանը, ինքնաճանաչողության և գեղագիտական ճաշակի ձևավորմանը, թանգարանային արտեֆակտերի միջոցով պահպանել և փոխանցել անցյալի հիշողությունը՝ կարևորելով հիշողության դերը ազգային ինքնության ձևավորման հարցում (Մարության 2006, 5)։ Հիմնվելով հայեցակարգային այսպիսի հենքի վրա, թանգարանը գործունեությունը ծավալում է ըստ ժամանակագրական շրջանների և պատմական զարգացումների երեք առանձին սրահներում համակարգված և հաղորդակցության հիմք հանդիսացող հիմնական ցուցադրությունների միջոցով։

Երևան քաղաքի պատմության թանգարանում պահպանվող և ցուցադրվող սպասքը թե՛ ժամանակագրության, թե՛ նյութի առումով բազմազան է։ Ցուցադրության կազմակերպման մեթոդների տեսանկյունից տարբեր են նաև այն ցուցադրական համալիրները որոնցում ներկայացված են սպասքի նմուշները։ Անկախ վերը նշված նկատառումներից անփոփոխ է միայն սպասքի թանգարանային գործառույթը։

Սպասքը, հայտնվելով թանգարանում, կորցնում է իր՝ կենցաղը սպասարկող առաջնային նշանակությունը, ներկայանում որպես որոշակի տեղեկատվության կրող և փոխանցող թանգարանային առարկա (Ավետիսյան 2022, 139)։ Եվ հենց ցուցադրության մեջ է, որ սպասքը այցելուին փոխանցում է տեղեկատվություն, կամ ինչպես թանգարանագիտության մեջ է ընդունված ասել, տեղի է ունենում մշակութային հաղորդակցություն (Պողոսյան 2008, 16–17)։ Առհասարակ, մշակութային հաղորդակցությունը որպես գործընթաց, իրականացվում է երկու հիմնական միավորների առկայության պարագայում՝ տեղեկատվություն և ճիշտ ընտրված թանգարանային առարկա (այս երկու բաղադրիչների վրա հիմնվում է նաև թանգարանի ողջ գործունեությունը (Юренева 2003, 350)։ Իսկ ցուցադրության համար ճիշտ ընտրված առարկա համարվում է այն թանգարանային նմուշը, մեր պարագայում՝ սպասքը, որը թեմատիկ և ժամանակագրական համապատասխանելիություն ունի ցուցադրական միջավայրի հետ (Майстровская 1997, 7–8), հակառակ պարագայում չի ընկալվի որպես հաղորդակցության բաղադրիչ։ Ի վերջո առանձին ընտրված առարկաներն են հնարավոր դարձնում թեմայի բացահայտումը (Գևորգյան 2014ա, 19)։ Իսկ հաղորդակցման գործընթացի կառավարումը ուղղակիորեն կապված է ցուցադրության կազմակերպման մեթոդներին և

սկզբունքներին: Քննարկվող նյութը առավել առարկայական դարձնելու նպատակով ճիշտ ենք համարում Երևան քաղաքի պատմության թանգարանի առանձին ցուցադրական համալիրների օրինակներով ցույց տալ սպասքի դերը որպես հաղորդակցության միավորի:

ԵՔՊԹ հիմնական ցուցադրությունը սկսվում է առօրյա կիրառական և ծիսական խեցեղենի սիստեմատիկ մեթոդով կառուցված ցուցադրությամբ, որը ենթադրում է ժամանակագրական ճշգրիտ բաժանումներ (Գևորգյան 2014բ, 23): Նման ցուցադրություններում հաղորդակցությունը իրականացվում է ավանդույթների, ժամանակագրական բաժանումների հաջորդականության պահպանումով, իսկ ծիսական և առօրյա կիրառական սպասքի առկայությունը հնարավորություն է տալիս բանավոր խոսքը կառուցել տարբեր ուղղվածությամբ, հնարավոր դարձնելով սպասքի միջոցով հնագույն մարդու արհեստների, արտադրական տնտեսաձևերի, աշխարհընկալումների, հավատալիքների, ծեսերի մասին ընդհանրական տեղեկատվության փոխանցումը: Սպասքի միջոցով ժամանակաշրջանին բնորոշ ավանդույթի առանձնահատկությունը ընդգծող ցուցադրություն է նույն սրահում ներկայացված կարասային թաղումը և դամբարաններից հայտնաբերված խեցանոթների թեմատիկ-միջավայրային ցուցադրությունները:

Հաջորդ սրահում 19-րդ դարի քաղաքային բնակարանի թեմատիկ-միջավայրային ցուցադրության շրջանակներում կահույքի առանձին պարագաների և սպասքի զուգորդման միջոցով սպասքը ներկայացվում է և՛ քաղաքային կենցաղի, և՛ ժամանակաշրջանին բնորոշ սպասքի կիրառական առանձնահատկությունների բնութագիրչ: Եթե ճաշասեղանի վրա սպասքի ցուցադրումով ընդգծվել է սպասքի կիրառական նշանակությունը՝ որպես կենցաղային անհրաժեշտություն, ապա սպասքապահարանի առկայությունը խոհանոցային միջավայրից հյուրասենյակ սպասքի ցուցադրական անցման վկայությունն է, որի նպատակը սպասքի միջոցով սոցիալական դիրքի ընդգծումը կարող ենք համարել:

Հետաքրքիր է նույն ցուցադրության մեջ դեկորատիվ ափսեների ներկայացումը որպես հուշանվեր և բնակարանի ներքնատեսքի հարդարման միջոց: Առանձին քննարկման նյութ է դեկորատիվ ափսեների արտաքին հարդարանքի մանրամասները, որոնք առանձին տեղեկատվական նյութի աղբյուր են: Օրինակ՝ կնոջ դիմանկարով ափսեն, որ պատկերում է 1800-ականներին Երևանի պատմության մեջ հայտնի մելիքներից մեկի՝ Սահակ Մելիք-Աղամալյանի (Ամիրյան 2009, 9) հարսին, ապահովում է ցուցադրության թեմատիկ հաջորդականությունը, նույն սրահում ցուցադրվող Մելիք Սահակի հագուստի և անձնական իրերի հետ, այսինքն այստեղ վստահ կարող ենք ասել, որ առանձին ընտրված սպասքը ճիշտ միջավայրում զուգորդվում է ընդհանուր ցուցադրական համալիրի մեջ և լիովին ընկալելի է որպես մշակութային տեքստի բաղադրիչ: Նմանօրինակ դեկորատիվ ափսեների նմուշներ են երրորդ ցուցասրահում հայկական կոնյակի պատմությունը ներկայացնող ցուցադրական համալիրի մաս կազմող երկու ճենապակե ափսեները՝ գրությամբ՝ «Ереванский коньячный завод, основан в 1887г», որոնք համալիր-թեմատիկ մեթոդով կազմված ցուցադրության մեջ Երևանի կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձության մասին ազդարարող ցուցապաստառ են հիշեց-

նում: ԵՔՊԹ դեկորատիվ ափսեների օրինակներով տեսնում ենք, որ սպասքի վրա առկա պատկերագրությունը կամ մակագրությունը թանգարանային միջավայրում ընկալվում է որպես տեղեկատվական տեքստ, որի միջոցով իրականացվում է հաղորդակցություն: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այցելուն ցուցադրությունը որպես մշակութային տեքստ նախ ընկալում է տեսողությամբ, ապա պատկերազարդ կամ մակագիր ցուցանմուշները կարող ենք համարել բավականին «խոսուն» ցուցանմուշներ:

Բացի ցուցադրության կազմակերպման համար շատ կարևոր այս նկատառումներից, ընդգծենք նաև, որ որևէ հայտնի մարդու կամ իրադարձության հետ թանգարանային առարկայի կապը այցելուի և առարկայի մեջ զգայականության դաշտ է ձևավորում (Կոբելյան 2014, 128) և մեծացնում է տվյալ առարկայի շուրջ այցելուի հետաքրքրվածությունը: Այդպիսի թանգարանային առարկա է համալիր-թեմատիկ ցուցադրությամբ ներկայացվող 18-րդ դարով թվագրվող մկրտության ավազանը, որը պատկանել է 18–19-րդ դարերի հայ ազնվականական տներից Գեղամյաններին, ովքեր վարել են Երևանի խանության հայկական հետևակային գնդի հազարապետի, այնուհետև՝ քաղաքագլխի պաշտոնները (Կարապետյան 2009, 38): Եկեղեցական սպասքի այս նմուշը պղնձե կենցաղային սպասքի հետ մեկ ցուցադրական համալիրում ցուցադրելը կարծես ստվերում է տվյալ առարկայի հոգևոր կենցաղը սպասարկող կիրառական նշանակությունը, բայց միևնույն ժամանակ նպաստում է պղնձագործական արհեստի մասին համակողմանի տեղեկատվության փոխանցմանը:

Հաղորդակցության իրականացման համատեքստում ցուցադրության կազմակերպման մեթոդից զատ կարևոր են նաև ցուցադրական համալիրների դասավորության հաջորդականությունն ու փոխկապակցվածությունը: ԵՔՊԹ սպասքի ցուցադրական համալիրների դասավորության հաջորդականությունը իրականացված է պատմական իրադարձությունների և ժամանակագրական վերլուծության տրամաբանության մեջ, ինչը հատուկ է պատմական բնույթի թանգարաններին (Պիկիչյան 2009, 17): Այս տրամաբանությամբ կառուցված ցուցադրությունները միտված են տվյալ ժամանակաշրջանը կամ պատմական ընթացքը ներկայացնելուն (Գևորգյան 2020, 165): Այս առումով ևս ԵՔՊԹ սպասքի ցուցադրական համալիրները ամբողջությամբ լուծում են իրենց առջև դրված խնդիրը:

Այսպիսով, ԵՔՊԹ սպասքի ցուցադրական համալիրների կազմակերպման մեթոդները հետևյալն են՝ սիստեմատիկ, համալիր-թեմատիկ և թեմատիկ-միջավայրային, որոնց միջոցով թանգարանում ներկայացված սպասքը լիովին «տեղավորվում» է թանգարանի հաղորդակցային տեքստում: Ընտրված ցուցադրական մեթոդների շնորհիվ է նաև, որ թանգարանում ցուցադրվող սպասքը համակողմանի ներկայացված է որպես մշակութային տարր՝ ընդգծելով սպասքի ներգրավվածությունը հասարակական կյանքի տարբեր շերտերում: Ուսումնասիրության արդյունքում կատարած եզրահանգումները թույլ են տալիս կարծիք հայտնել, որ սպասքը մշակութային դիմագիծ ունեցող, նյութական մշակույթի կարևոր բաղադրիչ է, որը ցուցադրական միջավայրի հետ զուգորդումների շնորհիվ լիովին իրականացնում է իր թանգարանային գործառույթը: Կարևոր է ընդգծել նաև, որ

ցուցադրական համալիրի կազմակերպման մեթոդները թեմայի բացահայտման կարևոր միջոց են, և որքան ճկուն է ընտրված մեթոդը, այնքան կառավարելի է մշակութային հաղորդակցության գործընթացը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄԻՐՅԱՆ 2009 – Ամիրյան Ա. Ա., Մելիք-Աղամալյաններ, Երևանի նշանավոր ընտանիքները, Հատոր 1, Երևան, 2009:
2. Ավետիսյան 2022 – Ավետիսյան Մ. Ս., Եկեղեցական սպասքի թանգարանային ցուցադրությունները, Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ, Մեծամոր, 2022:
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ 2014 – Գևորգյան Լ. Պ., Թանգարանային ցուցադրությունների կազմակերպման հիմունքներ, Երևան, 2014:
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ 2020 – Գևորգյան Լ. Պ., Ազգագրական ուղղվածություն ունեցող ցուցադրությունները արդի հայ ինքնության ձևավորման գործընթացի համատեքստում, ՀՀ ԳԱԱ Շիրակի Հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ 23, Հատոր 2, Գյումրի, 2020, էջ 162 – 173:
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 2009 – Կարապետյան Ա. Գ., Գեղամյաններ, Երևանի նշանավոր ընտանիքները, Հատոր 1, Երևան, 2009:
6. ՄԱՐՈՒԹՅԱՆ 2006 – Մարության Հ. Տ., Հիշողության դերը ազգային ինքնության կառուցվածքում, Երևան, 2006:
7. ՊԻԿԻՉՅԱՆ, ՀԱՐՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ 2006 – Պիկիչյան Հ. Պ., Հարոյան Մ. Ս., Գրիգորյան Ա. Ֆ., Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ, Երևան, 2006:
8. ՊԻԿԻՉՅԱՆ 2009 – Պիկիչյան Հ. Վ., Թանգարանն իբրև պատմական միջավայրի հեռանկարի կազմակերպման միջավայր, Թանգարանական հանդես, N 1 – 2, Երևան 2009, էջ 17 – 25:
9. ՊՈՂՈՍՅԱՆ 2008 – Պողոսյան Դ. Ա., Թանգարանը մշակութային հաղորդակցության միջավայր, Երևան, 2008:
10. ՊՈՂՈՍՅԱՆ 2020 – Պողոսյան Դ. Ա., Թանգարանագիտության տեսություն և թանգարանագիտական միտքը Հայաստանում, Երևան, 2020:
11. ՊՈՂՈՍՅԱՆ 2008 – Պողոսյան Դ. Ա., Թանգարանային ցուցադրությունը իբրև հաղորդակցական կրթական միջավայր, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2008, N 3, էջ 210 – 219:
12. ՍԱՐԳՍՅԱՆ 2021 – Սարգսյան Ա. Խ., Երևան քաղաքի պատմության թանգարանը, Հայկազեան հայագիտական հանդէս, Հատոր 41, Բէյրութ, 2021, էջ 745 – 752:
13. ЮРЕНЕВА 2003 – Юренева Т., Музееведение, Москва, 2003.
14. МАЙСТРОВСКАЯ 1997 – Майстровская М., Музейная экспозиция: тенденции развития, На пути к музею XXI века, сборник научных трудов, Москва, 1997.

Mery Avetisyan
Yerevan History Museum
meryavetisyan1984@gmail.com

THE ROLE OF UTENSILS COMPLEXES OF YEREVAN HISTORY MUSEUM IN CULTURAL COMUNICATION CONTEXT

Keywords: museum collection, Yerevan History Museum, utensils, function, museum exhibit, cultural communication, exhibition.

Thus, the systematic, complex-thematic and thematic-environmental methods, through which the utensils presented in the museum completely "fit" the communicative text presented by the museum, are the methods of the organization of the exposition complexes of utensils of the Yerevan History Museum. It is thanks to the chosen methods that the utensils displayed in the museum are comprehensively presented as a cultural element, which emphasizes an important role of utensils in the various spheres of the public life.

The conclusions drawn as a result of the present study suggest that utensils, having cultural specificity, are an important component of the material culture and fully perform their museum function due to their combination with the exposition environment. It is also important to emphasize that the methods of the organization of the exhibition complex are important means for the disclosure of the topic, so the more flexible the chosen method is, the more manageable the process of cultural communication is.

Мери Аветисян
Музей истории города Еревана
meryavetisyan1984@gmail.com

РОЛЬ ЭКСПОЗИЦИОННЫХ КОМПЛЕКСОВ УТВАРИ В КОНТЕКСТЕ КУЛЬТУРНОГО ОБШЕНИЯ

Ключевые слова: коллекция музея, Музея истории города Еревана, утварь, функция, экспонат, культурное обшения, экспозиция.

Таким образом, методами организации экспозиционных комплексов утвари Музея истории города Еревана являются систематические, комплексно-тематические и тематико-средовые методы, посредством которых утварь, представленная в музее, полностью «умещается» в коммуникативном тексте, представленном музеем. Именно благодаря выбранным методам утварь, демонстрируемая в музее, всесторонне представлена как культурный элемент, что подчеркивает важную роль утвари в разных сферах общественной жизни.

Выводы, сделанные в результате исследования, наводят на мысль о том, что утварь, обладая культурной спецификой, является важной составляющей материальной культуры и полностью реализует свою музейную функцию благодаря сочетанию с экспозиционной средой. Важно также подчеркнуть, что методы организации экспозиционного комплекса являются важным средством раскрытия темы, и чем гибче выбранный метод, тем более управляем процесс культурной коммуникации.

Մերի Ավետիսյան

Երևանի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում

Նկ.1. Միստեմատիկ սկզբունքով կազմված ցուցադրություն: ԵՔՊԹ

Նկ.2. Միստեմատիկ սկզբունքով կազմված ցուցադրություն: ԵՔՊԹ

Նկ.3. Թեմատիկ - միջավայրային մեթոդով կազմակերպված ցուցադրություն: ԵՔՊԹ:

Նկ.4. Թեմատիկ - համալիր մեթոդով կազմակերպված ցուցադրություն: ԵՔՊԹ:

Նկ.5. Դեկորատիվ ափսե: ԵՔՊԹ

Նկ.6. Դեկորատիվ ափսե: ԵՔՊԹ